«ՅՈՅՍ Ո՛Չ ԵՐԲԵՔ ԱՄԱՉԵՑՈՒՑԱՆԷ»
SPES NON CONFUNDIT

ԿՈՆԴԱԿ ՀՌՉԱԿՄԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՀՌՈՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՖՐԱՆՑԻՍԿՈՍԸ,
ԱՍՏԾՈ ԾԱՌԱՆԵՐԻ ԾԱՌԱՆ

ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԿԸՆԹԵՐՑԵՆ ՆԱՄԱԿԸ,
ԹՈՂ ՈՐ ՀՈՒՅՍԸ ԼՑՆԻ ՁԵՐ ՍՐՏԵՐԸ

1. «ՅՈՅՍ Ո՛Չ ԵՐԲԵՔ ԱՄԱՉԵՑՈՒՑԱՆԷ». *«Հույսը երբեք հուսախաբ չի թողնում»* (Հռմ 5, 5): Հույսի նշանի ներքո՝ Պողոս Առաքյալը քաջալերական այս խոսքերն ուղղեց Հռոմի քրիստոնեական համայնքին: Հույսը կենտրոնական ուղերձն է նաև գալիք Հոբելյանական Տարվա, որը, հնագույն ավանդույթի համաձայն, Պապը հռչակում է քսանհինգ տարին մեկ: Իմ մտքերն ուղղվում են բոլոր այն հույսի ուխտավորներին, ովքեր կմեկնեն Հռոմ՝ Սուրբ Տարին ապրելու համար, և բոլոր նրանց, ովքեր, թեև չեն կարողանա այցելել Պետրոս և Պողոս Առաքյալների քաղաքը, կնշեն այն իրենց տեղական Եկեղեցիներում: Թող որ բոլորի համար Հոբելյանական Տարին լինի անկեղծ, անձնական հանդիպման պահ Տեր Հիսուսի հետ, Ով փրկության *«դուռն»* է (հմմտ. Հվի 10, 7.9), և Ում Եկեղեցին պարտավոր է հռչակել միշտ, ամենուր և բոլորին որպես *«մեր հույսը»* (1Տմ 1, 1):

Բոլորը գիտեն, թե ի՛նչ է նշանակում հուսալ: Յուրաքանչյուր մարդու սրտում հույսն ապրվում է որպես գալիք լավ բաների ցանկություն և ակնկալիք, չնայած մենք չգիտենք, թե ի՛նչ կարող է բերել ապագան: Այնուամենայնիվ, ապագայի վերաբերյալ անորոշությունը երբեմն կարող է առաջացնել հակասական զգացմունքներ, որոնք տատանվում են ապահով վստահությունից մինչև մտավախություն, հանգստությունից մինչև անհանգստություն, հաստատակամ համոզմունքից մինչև երկմտանք և կասկած: Հաճախ հանդիպում ենք հուսահատ, վիատված մարդկանց, ովքեր կասկածամտությամբ ու հոռետեսությամբ են տրամադրված ապագայի հանդեպ, կարծես ոչինչ չի կարող նրանց երջանկություն բերել: Բոլորիս համար Հոբելյանական Տարին հույսով նորոգվելու առիթ թող լինի: Աստծո Խոսքն օգնում է մեզ գտնել այդ հույսի պատճառները: Այն ընդունելով որպես մեր ուղեցույց՝ վերադառնանք այն պատգամին, որը Պողոս Առաքյալը ցանկանում էր հաղորդել Հռոմի քրիստոնյաներին:

Հույսի մի Խոսք

2. *«Ուրեմն, հավատքով արդարանալով, խաղաղություն ունենք Աստծո հետ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով. Նրա միջոցով մենք նաև հավատքով մուտք ունենք դեպի այս շնորհը, որի մեջ գտնվում ենք, և ուրախանում ենք Աստծո փառքի մեր հույսով [...] : Եվ հույսը հուսախաբ չի թողնում մեզ, քանի որ Աստծո սերը հեղվել է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվել է մեզ»* (Հռմ 5, 1-2.5): Մտածելու համար բազմաթիվ կետեր կան, որոնք առաջարկում է Սուրբ Պողոսն այստեղ: Մենք գիտենք, որ Հռոմեացիներին ուղղված Նամակը վճռական քայլ է նրա ավետարանչական գործունեության մեջ: Մինչև այդ պահը նա կատարել

էր իր առաքելությունը Կայսրության արևելյան տարածքներում, և այժմ Հռոմը սպասում է նրան, այն ամենով, ինչ դա ներկայացնում է աշխարհի աչքին. մի մեծ մարտահրավեր, որին հարկավոր է դիմագրավել հանուն Ավետարանի քարոզչության, որը չի կարող արգելքներ կամ սահմաններ ճանաչել: Հռոմի եկեղեցին չէր հիմնվել Պողոսի կողմից, և նա վառ փափագն էր զգում շուտով հասնել այնտեղ՝ բոլորին բերելու համար մեռած և հարություն առած Հիսուս Քրիստոսի Ավետարանը՝ որպես ավետարանումը հույսի, որ կատարում է խոստումները, ներածում է փառքի մեջ , սիրո վրա հիմնված, հուսախաբ չի անում:

3. Հույսն, ըստ էության, ծնվում է սիրուց և հիմնված է այն սիրո վրա, որը բխում է Հիսուսի Սրտից, որը խոցվել էր Խաչի վրա. *«Եթե, արդարև, երբ փակավին թշնամիներ էինք, Աստծո հետ հաշտվեցինք Իր Որդու մահվան միջոցով, շատ ավելի՝ հիմա, երբ հաշտվել ենք, կփրկվենք Նրա կյանքի միջոցով »* (Հռմ 5, 10): Եվ Նրա կյանքը դրսևորվում է մեր հավատքի կյանքում, որը սկսվում է Մկրտությունից, զարգանում է հնազանդվելով Աստծո շնորհին և, հետևաբար, կենդանանում է հույսով, միշտ նորոգվում և անսասան է դառնում Սուրբ Հոգու ներգործությամբ:

Իրականում Սուրբ Հոգին է, Եկեղեցու ընթացքի մեջ Իր մշտատև ներկայությամբ, որ հավատացյալների մեջ ճառագում է հույսի լույսը. Նա վառ է պահում այն, ինչպես մի ջահ, որ երբեք չի մարում, զորակցություն և կորով տալու համար մեր կյանքին: Քրիստոնեական հույսն, արդարև, չի ամաչեցնում կամ հուսախաբ չի թողնում, քանի որ հիմնված է այն վստահության վրա, որ ոչինչ և ոչ ոք երբեք չի կարողանա բաժանել մեզ աստվածային սիրուց. *«Ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղությո՞ւնը, տրտմությո՞ւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկությո՞ւնը, վտանգնե՞րը, սո՞ւրը: [...] Բայց այս բոլոր բաների մեջ մենք ավելի քան հաղթող ենք Նրա միջոցով, Ով սիրեց մեզ: Որովհետև ես համոզված եմ, որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ ներկա բաները, ո՛չ գալիք բաները, ո՛չ զորությունները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, և ո՛չ էլ որևէ ա՛յլ ստեղծված բան, չեն կարող բաժանել մեզ Աստծո սիրուց, որ գտնվում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ»* (Հռմ 8, 35.37-39): Ահա՛ թե ինչո՛ւ այս հույսը դժվարությունների մեջ ետ չի ընկրկում. այն հիմնված է հավատքի վրա և սնվում է աստվածային սիրով, և այդպիսով՝ թույլ է տալիս առաջ գնալ կյանքում: Սուրբ Օգոստինոսն այս մասին գրում է. «Կյանքի կենսակերպերից որևէ մեկում անհնարին է ապրել առանց հոգու այս երեք մղումների. հավատալ, հուսալ, սիրել»[1]:

4. Սուրբ Պողոսը լիովին իրատես է: Նա գիտի, որ կյանքը կազմված է ուրախություններից և տխրություններից, որ սերը փորձության է ենթարկվում, երբ դժվարություններն ավելանում են, և հույսը կարծես խորտակվում է տառապանքի դիմաց: Այնուամենայնիվ, նա գրում է. *«Մենք պարծենում ենք մեր նեղություններով նաև, քանի որ գիտենք, որ նեղությունը համբերություն է ծնում, համբերությունը՝ փորձված առաքինություն, և փորձված առաքինությունը՝ հույս»* (Հռմ 5, 3-4): Առաքյալի համար նեղությունն ու տառապանքը բնորոշ իրավիճակներ են նրանց համար, ովքեր Ավետարանը հռչակում են թյուրիմացության ու հալածանքի համատեքստում (հմմտ. 2Կր 6, 3-10): Բայց նման իրավիճակներում, խավարի միջից նշմարվում է մի լույս. բացահայտվում է, թե ինչպե՛ս ավետարանմանը նեցուկ կանգնողն այն ուժն է, որ բխում է Քրիստոսի խաչից ու հարությունից: Եվ դա հանգեցնում է զարգացնելու մի առաքինություն, որը սերտորեն ազգակից է հույսին. *համբերությունը*: Մենք այլևս վարժվել ենք ցանկանալու ամեն ինչ և անմիջապես, մի աշխարհում, որտեղ շտապողականությունը դարձել է մշտական: Այլևս ժամանակ չկա հանդիպելու, և հաճախ նույնիսկ ընտանիքներում է դժվարանում միասին գտնվելը և հանգիստ զրուցելը: Համբերությունը դուրս է մղվել շտապողականության կողմից, ծանր վնաս պատճառելով անձերին: Իրոք, տեղը գրավել են

[1] Սբ. Օգոստինոս Հիպպոնացի, *Ճառեր*, 198, 2.

անհանդուրժողական անտարբերությունը, նյարդայնությունը, երբեմն նաև անհիմն բռնությունը, որոնք ծնում են անգոհունակ վիճակ և փակվածություն:

Համացանցի դարաշրջանում, մանավանդ, որտեղ տարածությունն ու ժամանակը փոխարինվել են «այստե՛ղ և հիմա՛»յով, համբերությունը դարձել է ինչ որ մի օտար հասկացողություն: Եթե կարողանայինք տակավին հիացմունքով դիտել արարչությունը, կկարողանայինք ըմբռնել, թե քանի՜ցս որոշիչ է համբերությունը: Սպասել եղանակների հերթափոխին՝ իրենց պտուղներով. ուշադրություն դարձնել կենդանիների կյանքին և զարգացման փուլերին. ունենալ Սուրբ Ֆրանցիսկոսի պարզ աչքերը, ով ուղիղ 800 տարի առաջ գրած իր *«Արարածների օրհներգ»* ստեղծագործության մեջ արարչությունն ընկալում էր որպես մի մեծ ընտանիք և արևն անվանում էր «եղբայր», իսկ լուսինը՝ «քույր»[2]: Համբերությունը վերագտնելը մեծապես օգտակար է սեփական անձին և ուրիշներին: Սուրբ Պողոսը հաճախ է խոսում համբերության մասին, ընդգծելու համար հաստատակամության և վստահության կարևորությունը այն բաների մեջ, որոնք Աստված խոստացել է մեզ, բայց նախևառաջ՝ նա վկայում է, որ Աստված համբերատար է մեր նկատմամբ, Նա, որ *«հարատևության և մխիթարության Աստվածն է»* (Հռմ 15, 5): Համբերությունը, որը նույնպես Սուրբ Հոգու պտուղներից մեկն է, կենդանի է պահում հույսը և ամրապնդում է այն որպես առաքինություն և ապրելակերպ: Ուստի, սովորե՞նք հաճախ հայցել համբերության շնորհը, որը հույսի դուստրն է և, միաժամանակ, սատարում է նրան:

Հույսի մի ընթացք

5. Հույսի և համբերության այս միահյուսումից պարզ է դառնում, որ քրիստոնեական կյանքը *մի ընթացք* է, որը կարիք ունի նաև *ուժգին պահերի*՝ սնուցելու և զորացնելու համար հույսը, այս անփոխարինելի ուղեկիցը, որը թույլ է տալիս նշմարել նպատակակետը. հանդիպումը Տեր Հիսուսի հետ: Ես սիրով եմ մտածում այն բանի մասին, որ 1300 թվականին Առաջին Հոբելյանական Տարվա հռչակմանը նախորդել է շնորհի մի ընթացք՝ ժողովրդական հոգեկանության կողմից ոգևորված: Իրոք, մենք չենք կարող մոռանալ այն տարբեր կերպերը, որոնց միջոցով ներման շնորհն առատորեն հեղվել է Աստծո հավատարիմ Սուրբ Ժողովրդի վրա: Հիշենք, օրինակ, մեծ «ներողությունը» (*ինդուլգենցիա*), որը Սբ. Սելեստինուս Հինգերորդը ցանկանում էր շնորհել բոլոր նրանց, ովքեր 1294 թվականի Օգոստոսի 28-ին և 29-ին այցելելու էին Լ'Աքուիլայում գտնվող Քոլլեմաջջոյի Սրբուհի Մարիամ եկեղեցին, Բոնիֆացիուս Ութերորդ Պապի կողմից Սուրբ Տարին հաստատվելուց վեց տարի առաջ: Եկեղեցին արդեն իսկ փորձառությամբ ապրում էր, հետևաբար, ողորմության հոբելյանական շնորհը: Եվ նույնիսկ ավելի վաղ՝ 1216 թվականին, Հոնորիուս Երրորդ Պապն ընդունել էր Սուրբ Ֆրանցիսկոսի աղերսանքը, ով խնդրել էր ներողություն շնորհել բոլոր նրանց, ովքեր Պորցյունքոլա կայցելեին Օգոստոսի առաջին երկու օրերին: Նույնը կարելի է հաստատել դեպի Սանտյագո Դե Կոմպոստելա կատարվող ուխտագնացության մասին. իրոք, Կալլիքստուս Երկրորդ Պապը 1122 թվականին արտոնեց, որ Հոբելյանը այդ Սրբավայրում կատարվի ամեն անգամ, երբ Հակոբոս Առաքյալի տոնն ընկնում է Կիրակի օրը: Լավ է, որ հոբելյանական տոնակատարությունների այս «համատարած» ձևը շարունակվի, որպեսզի Աստծո ներման զորությունը աջակցի և ուղեկցի համայնքների ու անհատների ընթացքին:

Պատահական չէ, որ *ուխտագնացությունն* արտահայտում է յուրաքանչյուր հոբելյանական միջոցառման հիմնական տարրերից մեկը: Ճանապարհի ընկնելը բնորոշ է նրան, ով գնում է փնտրելու կյանքի իմաստը: Ոտքով կատարված ուխտագնացությունը մեծապես նպաստում է

[2] Հմմտ. *Ֆրանցիսկյան աղբյուրներ*, 263, 6.10.

լռության, ջանքի, էականության արժեքի վերաբացահայտմանը: Նաև հաջորդ տարի *հույսի ուխտավորները* չեն պակասելու՝ քայլելու հին ու նոր ճանապարհների երկայնքով, ուժգին կերպով ապրելու համար հոբելյանական փորձառությունը: Ինչ վերաբերվում է Հռոմ քաղաքին, առկա են լինելու հավատքի երթուղիներ, ավանդական գետնադամբանների և Յոթ Եկեղեցիների երթուղուց բացի: Անցնել մի երկրից մյուսը, ասես սահմանները հաղթահարված լինեին, անցնել մի քաղաքից մյուսը՝ բնության և արվեստի գործերի հայեցողությամբ, հնարավորություն կտա հավաքել և յուրացնել տարբեր փորձառությունների ու մշակույթների գանձը, սեփական անձի մեջ կրելու համար այն գեղեցկությունը, որը, աղոթքի միջոցով ներդաշնակված, հանգեցնում է երախտագիտություն հայտնելու Աստծուն այն սքնաչելիքների համար, որոնք Նա գործում է: Հոբելյանական եկեղեցիները, երթուղիների երկայնքին և Քաղաքում, կարող են հոգեկանության օազիսներ հանդիսանալ, որտեղ կարելի է կազդուրել հավատքի ուղևորությունը և սեփական ծարավը հագեցնել հույսի աղբյուրներից, նախևառաջ մերձենալով Հաշտության Խորհրդին, որն անփոխարինելի մեկնակետն է դարձի իրական ընթացք համար: Մասնավոր Եկեղեցիներում թող որ հատուկ հոգատարություն ցուցաբերվի քահանաների և հավատացյալների նախապատրաստությանը Խոստովանություններին, և անհատական ձևաչափով Խորհրդի հասանելիությանը:

Այս ուխտագնացությանը ես ուզում եմ հատուկ հրավեր ուղղել Արևելյան Եկեղեցիների հավատացյալներին, հատկապես նրանց, ովքեր արդեն լիարժեք հաղորդության մեջ են Պետրոսի Իրավահաջորդի հետ: Նրանք, որ այնքա՜ն շատ են տառապել, հաճախ մինչև մահ՝ Քրիստոսի և Եկեղեցու հանդեպ իրենց հավատարմության պատճառով, պետք է իրենց առանձնահատուկ կերպով ողջունված զգան այս Հռոմում, որը նրանց համար նույնպես Մայր է և որն այնքա՜ն շատ հիշողություններ է պահպանում նրանց ներկայության մասին: Ընդհանրական Եկեղեցին, որն հարստացած է նրանց հնագույն ծեսերով, Հայրերի, վանականների ու աստվածաբանների աստվածաբանությամբ ու հոգեկանությամբ, ցանկանում է խորհրդանշական կերպով արտահայտել նրանց և նրանց օրթոդոքս եղբայրների ու քույրերի ընդունումը, մի դարաշրջանում, երբ նրանք արդեն իսկ ապրում են Խաչի Ճանապարհի ուխտագնացությունը, որի բերմամբ նրանք հաճախ ստիպված են լինում լքելու իրենց ծննդավայրերը, իրենց սուրբ հողերը, որտեղից նրանց դեպի ավելի ապահով Երկրներ են քշում բռնությունն ու անկայունությունը: Նրանց համար՝ Եկեղեցու կողմից սիրված լինելու հույսը, – Եկեղեցու, որը չի լքելու իրենց, այլ՝ հետևելու է իրենց ո՛ւր էլ որ իրենք գնան, – է՛լ ավելի ուժգին է դարձնում Հոբելյանական Տարվա նշանը:

6. 2025 թվականի Սուրբ Տարին շարունակականության մեջ է շնորհի նախորդ իրադարձությունների հետ: Հերթական վերջին Հոբելյանական Տարվա սկզբին մենք հատեցինք Հիսուս Քրիստոսի ծննդյան երկու հազար տարիների շեմը: Այնուհետև, 2015թ.ի Մարտի 13-ին, ես հռչակեցի Հոբելյանական Արտակարգ Տարի, որպես նպատակ ունենալով բացահայտել և հնարավորություն տալ հանդիպելու Աստծո «ողորմած Դեմքին»[3], որը Ավետարանի կենտրոնական ավետիսն է յուրաքանչյուր մարդու համար՝ բոլոր դարաշրջաններում: Այժմ հասել է նոր Հոբելյանական Տարվա ժամանակը, որի ընթացքում ևս մեկ անգամ ընդարձակ բացելու ենք Սուրբ Դուռը, ընծայելու համար Աստծո սիրո կենդանի փորձառությունը, որը սրտի մեջ արթնացնում է Քրիստոսով փրկության հաստատ հույսը: Միևնույն ժամանակ, այս Սուրբ Տարին կողմնորոշելու է մեր ընթացքը դեպի մեկ ա՛յլ հիմնարար տարեդարձ բոլոր քրիստոնյաների համար. 2033 թվականին, փաստացի, տոնելու ենք Տեր Հիսուսի չարչարանքների, մահվան և հարության միջոցով իրականացված Փրկագործության 2000-ամյակը: Այսպիսով, մենք կանգնած ենք մի ճանապարհի դիմաց, որը նշանավորվում է մեծ հանգրվաններով, որոնց մեջ Աստծո շնորհը կանխում և ուղեկցում է

[3] Հմմտ. Ֆրանցիսկոս Պապ, Կոնդակ *«Ողորմության Դեմքը»* (11 Ապր. 2015), 1-3.

Ժողովրդին, որը եռանդով քայլում է հավատքի մեջ, գործուն սիրո մեջ և հույսի մեջ հարատևելով (հմմտ. 1Թսղ 1, 3):

Այսպիսի դարավոր ավանդության վրա հիմնված լինելով, և այն համոզվածության, որ այս Հոբելյանական Տարին կարողանալու է լինել շնորհի և հույսի բուռն փորձառություն ողջ Եկեղեցու համար, հաստատում եմ, որ Վատիկանում գտնվող «Սուրբ Պետրոս» Տաճարի Սուրբ Դուռը բացվի այս 2024 թվականի Դեկտեմբերի 24-ին, այդպիսով սկիզբ տալով հերթական Հոբելյանական Տարվան: Յաջորդ Կիրակի օրը՝ 2024 թվականի Դեկտեմբերի 29-ին, կբացեմ Սուրբ Դուռը իմ աթոռանիստ «Լաթերանի Սուրբ Հովհաննես» Մայր Տաճարի, որն այս տարվա Նոյեմբերի 9-ին տոնելու է իր օծման 1700-ամյակը: Դրանից հետո, 2025 թվականի Հունվարի 1-ին, Ամենասրբուհի Մարիամ Աստվածածնի հանդիսավոր տոնի օրը կբացվի «Սրբուհի Մարիամ Մեծ» պապական Տաճարի Սուրբ Դուռը: Վերջում, Կիրակի օրը՝ Հունվարի 5-ին, կբացվի քաղաքի պարիսպներից դուրս գտնվող «Սուրբ Պողոս» պապական Տաճարի Սուրբ Դուռը: Այս վերջին երեք Սուրբ Դռները կփակվեն մինչև նույն թվականի Դեկտեմբերի 28-ը՝ Կիրակի:

Հաստատում եմ նաև, որ 2024 թվականի Դեկտեմբերի 29-ին, Կիրակի օրը, բոլոր աթոռանիստ և աթոռակից տաճարներում, թեմական Եպիսկոպոսները մատուցեն Սուրբ Պատարագը որպես Հոբելյանական Տարվա հանդիսավոր բացում, այդ առիթի համար նախապես պատրաստված Ծիսակարգի համաձայն: Աթոռակից եկեղեցում կատարվելիք տոնակատարության համար Եպիսկոպոսին կարող է փոխարինել իր կողմից հատուկ կերպով նշանակված Պատվիրակը: *Համահավաքման* համար ընտրված եկեղեցուց դեպի թեմի աթոռանիստ մայր տաճար կատարվելիք ուխտագնացությունը թող որ հույսի ընթացքի նշան լինի, որը, Աստծո Խոսքով լուսավորված, միավորում է հավատացյալներին: Դրա ընթացքում պետք է ընթերցվեն որոշ հատվածներ սույն Փաստաթղթից և ժողովրդին պետք է ազդարարվի Հոբելյանական Ներողությունը, որը կարելի է ձեռքբերել նույն Ծիսակարգում պարունակված ցուցմունքների համաձայն՝ մասնավոր Եկեղեցիներում Հոբելյանական Տարվա տոնակատարության համար: Սուրբ Տարվա ընթացքում, որը մասնավոր Եկեղեցիներում կավարտվի 2025 թվականի Դեկտեմբերի 28-ին, Կիրակի օրը, պետք է ապահովվի, որ Աստծո Ժողովուրդը կարողանա լիարժեք մասնակցությամբ ընդունել ինչպես Աստծո շնորհի հույսի ավետիսը, այնպես էլ՝ դրա արդյունավետությունը հաստատող նշանները:

Հերթական Հոբելյանական Տարին կավարտվի Վատիկանում գտնվող «Սուրբ Պետրոս» պապական Տաճարի Սուրբ Դռան փակմամբ՝ 2026 թվականի Հունվարի 6-ին, Տիրոջ Աստվածահայտնության տոնի օրը: Թող որ քրիստոնեական հույսի լույսը կարողանա հասնել յուրաքանչյուր մարդու, որպես Աստծո սիրո պատգամ, ուղղված՝ բոլորին: Եվ թող որ Եկեղեցին կարողանա այս ավետիսի հավատարիմ վկան լինել աշխարհի բոլոր անկյուններում:

Հույսի նշաններ

7. Հույսը Աստծո շնորհի մեջ հայթայթելուց բացի, մենք կանչված ենք այն վերաբացահայտելու նաև *ժամանակների նշանների* մեջ, որոնք Տերն ընծայում է մեզ: Ինչպես հաստատում է Վատիկանյան Երկրորդ Ժողովը, *«Եկեղեցու մշտական պարտականությունն է քննել ժամանակների նշանները և մեկնաբանել դրանք Ավետարանի լույսի ներքո, այնպես՝ որ, յուրաքանչյուր սերնդին հարմար ձևով, կարողանա պատասխանել մարդկանց այն մշտական հարցադրումներին, որոնք վերաբերվում են ներկա ու ապագա կյանքի իմաստին և իրենց*

փոխադարձ հարաբերություններին»[4]: Անհրաժեշտ է, հետևաբար, ուշադրություն դարձնել այն մեծապես առատ բարությանը, որ ներկա է աշխարհի մեջ, որպեսզի չընկնենք փորձության մեջ՝ կարծելու, թե չարիքն ու բռնությունը գերակշռում են մեր դեմ: Բայց ժամանակների նշանները, որոնք պարունակում են Աստծո փրկարար ներկայության կարիքն ունեցող մարդկային սրտի իղձը, պահանջում են փոխակերպել իրենց հույսի նշանների:

8. Հույսի առաջին նշանը թող որ գործի վերածվի որպես *խաղաղություն* աշխարհի համար, որը կրկին ընկղմված է *պատերազմի* ողբերգության մեջ: Կորցրած լինելով անցյալի ողբերգությունների մասին հիշողությունը, մարդկությունը ենթարկվում է մի նոր ու դժվարին փորձության, որը բազմաթիվ մարդկանց համար բռնության դաժանությամբ կեղեքման պատճառ է հանդիսանում: Դեռ ի՞նչ կարող են կրել այս մարդիկ, որ արդեն չեն կրել: Ինչպե՞ս է հնարավոր, որ օգնության կանչող նրանց հուսահատ աղաղակը չի կարողանում մղել Ազգերի առաջնորդներին՝ կամենալու վերջ դնել տարածաշրջանային չափազանց շատ հակամարտություններին, գիտակցելով այն հետևանքները, որ կարող են դրանցից առաջ գալ համաշխարհային մակարդակի վրա: Չափազանցությո՞ւն է երազելը, որ զենքերը լռեն և դադարեն ավերածություններ ու մահ սփռել: Թող որ Հոբելյանական Տարին հիշեցնի, որ նրանք, ովքեր դառնում են *«խաղաղարարներ, Աստծո զավակներ կկոչվեն»* (Մտթ 5, 9): Խաղաղության անհրաժեշտությունը մարտահրավեր է նետում բոլորին և պահանջում է գործնական նախագծեր իրականացնել: Թող որ չպակասի դիվանագիտական հանձնառությունը՝ քաջությամբ և ստեղծագործական մոտեցմամբ կառուցելու համար տարածքներ տևական խաղաղությանն ուղղված բանակցությունների համար:

9. Ապագային հույսով նայելը հավասարազոր է նաև կյանքի վերաբերյալ մի այնպիսի տեսլական ունենալուն, որը լի է այնքա՜ն խանդավառությամբ, որ հնարավոր է նաև ուրիշների փոխանցել: Դժբախտաբար, պետք է ցավով արձանագրենք, որ բազմաթիվ իրավիճակներում այդ հեռանկարը բացակայում է: Առաջին հետևանքը *կյանքն ավանդելու ցանկության կորուստն է*: Կյանքի ջղաձիգ տեմպերի, ապագայի նկատմամբ վախերի, աշխատանքային երաշխիքների և սոցիալական պատշաճ պաշտպանության բացակայության պատճառով, ինչպես նաև՝ սոցիալական այնպիսի մոդելների, որոնցում օրակարգը թելադրված է շահույթի տենչով, այլ ո՛չ թե՝ հարաբերությունների հանդեպ հոգատարությամբ, տարբեր Երկրներում ականատես ենք լինում *ծնելիության մտահոգիչ անկման*: Ընդհակառակը, ա՛յլ միջավայրերում, «հանցանքը ժողովրդագրական աճի վրա բարդելը, ոմանց ծայրահեղ ու ընտրողական սպառողականության փոխարեն, խնդիրներին իրական լուծում տալուց խուսափելու միջոց է»[5]:

Կյանքի ավանդմանը տրամադիր լինելը՝ պատասխանատու մայրությամբ և հայրությամբ, այն նախագիծն է, որն Արարիչը դրոշմել է արանց և կանանց սրտերի ու մարմինների մեջ, մի առաքելություն, որը Տերը վստահում է ամուսիններին և նրանց սիրույն: Հրատապ է, որ, Պետությունների օրենսդրական պարտավորությունից բացի, չպակասի հավատացյալների հասարակության և քաղաքացիական ողջ հասարակության համոզված աջակցությունը, – քաղաքացիական հասարակության բոլոր հիմնարկներով հանդերձ, – որովհետև *նոր որդիներ և դուստրեր ծնելու երիտասարդների ցանկությունը*, որպես իրենց սիրո արգասավորության պտուղ, ապագա է պարգևում յուրաքանչյուր հասարակության և հույսի խնդիր է. կախում ունի հույսից և ծնում է հույս:

Քրիստոնեական համայնքը, հետևաբար, չի կարող որևէ մեկին զիջել *հանուն հույսի սոցիալական դաշինք* ստեղծելու անհրաժեշտությանն աջակցելու գործը, որը ներառական է և ո՛չ թե գաղափարախոսական, և պետք է գործի հանուն մի ապագայի, որը նշանավորվում է

[4] Վատիկան. Երկրորդ Համ. Ժողով, Հով. Սահմ. *«Քերկրանք և հույս»* (7 Դեկտ. 1965), 4.
[5] Ֆրանցիսկոս Պապ, Կոնդակ *«Գովաբանված եղիր»* (24 Մայիս 2015), 50.

բազմաթիվ տղա և աղջիկ երեխաների ժպիտներով, ովքեր պետք է գան լցնելու այլևս չափազանց բազմաթիվ դատարկ օրորոցները աշխարհի շատ մասերում: Բայց, իրականում, բոլորը կարիքն ունեն վերագտնելու ապրելու բերկրանքը, քանի որ մարդ արարածը, որ ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ (հմմտ. Ծնդ 1, 26), չի կարող բավարարվել գոյատևելով կամ պարզապես յոլա գնալով, հարմարվելով ներկային, թողնելով բավարարել իրեն միայն նյութական իրողություններով: Սա բանտարկում է մեզ անհատապաշտության մեջ և քայքայում է հույսը, ծնելով մի տխրություն, որ բույն է դնում սրտի մեջ՝ դարձնելով մեզ սառն ու անտարբեր:

10. Հոբելյանական Տարվա ընթացքում կանչված ենք լինելու դառնալ հույսի շոշափելի նշաններ՝ դժվարին պայմաններում ապրող մեր բազմաթիվ եղբայրների և քույրերի համար: Միտքս ուղղում եմ *բանտարկյալներին*, ովքեր, ազատությունից զրկված, կալանքի դժնդակությունից բացի, ամեն օր փորձառությունն են ունենում նաև զգացմունքային դատարկության, հարկադրված սահմանափակումների և, ո՛չ սակավաթիվ դեպքերում, հարգանքի բացակայության: Առաջարկում եմ Կառավարություններին, որ Հոբելյանական այս Տարվա ընթացքում ձեռնարկվեն այնպիսի նախաձեռնություններ, որոնք կարող են հույս վերադարձնել. համաներման կամ պատժի ներման ձևեր, որոնք ուղղված են օգնելու մարդկանց՝ վերագտնելու վստահությունը իրենք իրենց և հասարակության նկատմամբ. հասարակության մեջ վերաինտեգրման ուղիներ, որոնց պետք է համապատասխանի օրենքների պահպանման մեջ գործնական հանձնառությունը:

Սա մի հնագույն կոչ է, որ սերում է Աստծո Խոսքից և պահպանում է իմաստության իր ողջ արժեքը՝ գթության և ազատագրման գործեր հայցելով, որոնք անձանց թույլ կտան վերսկսել կյանքի իրենց ընթացքը. *«Սուրբ հայտարարեցեք հիսուներորդ տարին և երկրում ազատագրություն հռչակեցեք նրա բոլոր բնակիչների համար»* (Ղևտ 25, 10): Այն, ինչը որ հաստատված է Մովսիսական Օրենքի մեջ, կրկնվում է Եսայի Մարգարեի բերանով. *«Տերն ինձ ուղարկել է աղքատներին բարի լուր բերելու, կոտրված սրտերի վերքերը կապելու, գերիներին ու բանտարկյալներին ազատություն հռչակելու, Տիրոջ շնորհի տարին հայտարարելու»* (Ես 61, 1-2): Այն խոսքերն են, որոնք Հիսուսն Իրենը դարձրեց Իր պաշտոնի սկզբում՝ Ինքն Իր մեջ հայտարարելով *«Տիրոջ շնորհի տարվա»* կատարումը (հմմտ. Ղկս 4, 18-19): Երկրի բոլոր անկյուններում հավատացյալները, հատկապես Հովիվները, թող որ քարոզիչները հանդիսանան այս դիմումների, ձևավորելով միասնական մեկ ձայն, որը խիզախորեն կոչ է անում արժանապատիվ պայմաններ ստեղծել բանտարկվածների համար, հարգել մարդու իրավունքները և, առաջին հերթին, վերացնել մահապատժը, որն հակասում է քրիստոնեական հավատքին և ոչնչացնում է ներման ու վերանորոգման բոլոր հույսերը[6]: Բանտարկյալներին մոտիկության մի գործնական նշան ընծայելու համար՝ ես ինքս ցանկանում եմ մի Սուրբ Դուռ բացել բանտերից մեկում, որպեսզի լինի նրանց համար խորհրդանիշ, որը նրանց հրավիրում է դեպի ապագան նայել հույսով և կյանքի վերանորոգված հանձնառությամբ:

11. Հարկավոր է հույսի նշաններ ընծայել *հիվանդներին*, գտնվելու լինեն նրանք տանը, թե հիվանդանոցում: Թող որ նրանց տառապանքները սփոփանք գտնեն իրենց այցելող մարդկանց մոտիկության և ստացած գորովի մեջ: Ողորմության գործերը նաև հույսի գործեր են, որոնք սրտերի մեջ վերարթնացնում են երախտագիտության զգացումներ: Եվ թող որ երախտագիտությունը հասնի բոլոր բուժաշխատողներին, ովքեր, հաճախ դժվարին պայմաններում, իրենց առաքելությունն իրականացնում են հիվանդների և ամենադյուրաբեկ անձանց նկատմամբ հոգատար խնամքով:

[6] Հմմտ. *Կաթողիկե Եկեղեցու Քրիստոնեական*, 2267.

Թող որ չպակասի ներառական ուշադրությունը նրանց նկատմամբ, ովքեր յուրահատուկ կերպով տանջալի կենսապայմաններում հայտնվելով՝ իրենց սեփական տկարության փորձառությունն են ունենում, հատկապես, եթե բռնվում են պաթոլոգիաներով կամ հաշմանդամությամբ, որոնք մեծապես սահմանափակում են իրենց անձնական ինքնուրույնությունը: Նրանց հանդեպ հոգատարությունը մի օրհներգ է՝ մարդկային արժանապատվությանը, հույսի մի երգ, որը պահանջում է ամբողջ հասարակության նվագակցությունը:

12. Հույսի նշանների կարիք ունեն նաև նրանք, ովքեր իրենք իսկ հույսի ներկայացուցիչներն են. *երիտասարդները*: Նրանք, ցավոք, հաճախ տեսնում են, թե ինչպես են փլուզվում իրենց երազանքները: Մենք չենք կարող հիասթափեցնել նրանց. ապագան հիմնված է նրանց խանդավառության վրա: Գեղեցիկ է տեսնելը, թե նրանք ինչպե՛ս են իրենց շուրջբոլորն էներգիաներ տարածում, օրինակ՝ երբ նրանք թևերը քշտում են և կամովին նվիրվում են գործի՝ աղետի և սոցիալական դժվարությունների իրավիճակներում: Բայց տխուր է տեսնելը երիտասարդների, որոնք զուրկ են հույսից. մյուս կողմից, սակայն, երբ ապագան անորոշ է, և անթափանց՝ երազների համար, երբ ուսումը հնարավորություններ չի ընձեռում, իսկ աշխատանքի կամ բավականաչափ կայուն զբաղվածության բացակայությունը ենթարկում է երազանքների զրոյացման վտանգին, անխուսափելի է, որ ներկան ապրվի մելամաղձոտության ու ձանձրույթի մեջ: Թմրամիջոցների պատրանքը, օրինազանցության վտանգը և վաղանցուկի որոնումը նրանց մեջ ավելի շատ շփոթվածություն են ստեղծում, քան մյուսների մեջ, և թաքցնում են կյանքի գեղեցկությունն ու իմաստը, նրանց սայթաքել տալով մութ անդունդների մեջ և դրդելով կատարել ինքնակործանարար արարքներ: Այդ իսկ պատճառով, Հոբելյանական Տարին թող որ Եկեղեցու մեջ առիթ լինի՝ վերանորոգելու մեր հանձնառությունը նրանց հանդեպ. մի վերանորոգ սիրով հոգ տանենք պատանիների, ուսանողների, նշանվածների, երիտասարդ սերունդների մասին: Մոտիկություն՝ երիտասարդներին, նշանակում է բերկրանք և հույս՝ Եկեղեցուն ու աշխարհին:

13. Չեն կարող հույսի նշաններ պակասել *միգրանտների* նկատմամբ, ովքեր լքում են իրենց երկրները՝ իրենց և իրենց ընտանիքների համար ավելի լավ կյանք փնտրելու նպատակով: Թող որ նրանց ակնկալիքները հօդս չցնդեն նախապաշարումների ու մտային փակվածությունների պատճառով. հյուրընկալությունը, որն իր գիրկը լայնորեն բացում է յուրաքանչյուր մարդու առջև՝ ըստ իր արժանապատվության, թող որ ուղեկցվի պատասխանատվության զգացումով, որպեսզի ոչ ոք չզրկվի ավելի լավ ապագա կառուցելու իրավունքից: Չափազանց բազմաթիվ *աքսորյալների, փախստականների ու տեղահանվածների* համար, ովքեր միջազգային վիճահարույց իրադարձությունների պատճառով ստիպված են լինում փախչել՝ պատերազմներից, բռնություններից և խտրականություններից խուսափելու նպատակով, թող որ երաշխավորվի ապահովությունը, աշխատանքի և կրթության հնարավորությունը, որոնք անհրաժեշտ գործիքներն են հասարակական նոր համատեքստում նրանց ինտեգրման համար:

Թող որ քրիստոնեական համայնքը միշտ պատրաստ լինի պաշտպանելու ամենատկարների իրավունքները: Թող որ մեծահոգաբար ընդարձակ բացի հյուրընկալության դռները, որպեսզի ոչ ոքի երբեք չպակասի ավելի լավ կյանքի հույսը: Թող որ մեր սրտերում հնչի Տիրոջ Խոսքը, որը, Վերջին Դատաստանի մասին պատմող մեծ առակում, ասել է. *«Օտարական էի, և ընդունեցիք ինձ»*, որովհետև *«այն ամենը, որ արեցիք իմ այս ամենափոքր եղբայրներից մեկին, ի՛նձ արեցիք»* (Մտթ 25, 35.40):

14. Հույսի նշանների են արժանի *տարեցները*, ովքեր հաճախ ապրում են միայնության և լքվածության զգացման փորձառությունը: Արժևորել այն գանձը, որ նրանք ներկայացնում են

իրենց անձերով, նրանց կյանքի փորձը, իմաստությունը, որը նրանք կրում են, և նպաստը, որն ի վիճակի են առաջարկելու, առաջադրանք է քրիստոնեական համայնքի և քաղաքացիական հասարակության համար, որոնք կոչված են միասին աշխատելու՝ սերունդների միջև դաշնակցության համար:

Մի հատուկ միտք եմ ուղղում պապիկներին ու տատիկներին, ովքեր ներկայացնում են հավատքի և կյանքի իմաստության ավանդումը ավելի երիտասարդ սերունդներին: Թող որ նրանց աջակցի զավակների երախտագիտությունը և թոռնիկների սերը, ովքեր նրանց մեջ գտնում են իրենց արմատները՝ հասկացողության ու քաջալերանքի հետ միասին:

15. Սրտանց հույս եմ մաղթում միլիարդավոր *աղքատների* համար, որոնց հաճախ պակասում են կյանքի համար ամենաանհրաժեշտ բաները: Աղքատացման միշտ նորանոր ալիքների դիմաց՝ առկա է դրան ընտելանալու և հանձնվելու վտանգը: Բայց չենք կարող մեր հայացքները հեռացնել մեծապես ողբերգական իրավիճակներից, որոնք այժմ հանդիպում են ամենուր, ո՛չ միայն աշխարհի որոշակի տարածաշրջաններում: Ամեն օր հանդիպում ենք աղքատ կամ աղքատացած մարդկանց և երբեմն դրանք հենց մեր հարևաններն են: Հաճախ իրավիճակն այնպիսին է, որ նրանք չունեն տուն, ո՛չ էլ՝ օրվա համար բավարար սնունդ: Նրանք տառապում են բացառվածության և շատերի անտարբերության պատճառով: Սկանդալային իրականություն է, որ հսկայական ռեսուրսներ ունեցող աշխարհում, որոնք հիմնականում հատկացված են սպառազինությանը, աղքատները «մեծամասնությունն են […], միլիարդավոր մարդիկ: Այսօր նրանք հիշատակվում են միջազգային քաղաքական և տնտեսական բանավեճերի ժամանակ, բայց հիմնականում թվում է, թե նրանց խնդիրները ներկայացվում են որպես հավելված, որպես մի խնդիր, որն ավելացվում է գրեթե պարտավորությունից մղված կամ ծայրամասային եղանակով, այն դեպքերում, երբ դրանք որպես սոսկ կողմնակի վնաս չեն համարվում: Փաստացի, գործնական իրականացման պահին, դրանք հաճախ մնում են վերջին տեղում»[7]: Չմոռանանք. աղքատները, գրեթե միշտ, զոհ են, ո՛չ թե հանցավոր:

Հույսի կոչեր

16. Արձագանքելով մարգարեների հնամենի խոսքերին, Հոբելյանական Տարին հիշեցնում է, որ *Երկրի բարիքները* սահմանված են ո՛չ թե արտոնյալ քչերի, այլ՝ բոլորի համար: Անհրաժեշտ է, որ նրանք, ովքեր տիրապետում են հարստությունների, առատաձեռն լինեն՝ կարիքի մեջ ճանաչելով եղբայրների դեմքը: Մտածում եմ հատկապես նրանց մասին, ովքեր ենթարկվում են ջրի ու սննդի պակասին. սովը սկանդալային պատուհաս է մեր մարդկության մարմնի մեջ և բոլորին խղճի ցնցման է հրավիրում: Վերանորոգում եմ կոչս, որպեսզի «զենքի և ա՛յլ ռազմական ծախսերի համար գործածվող գումարներով ստեղծենք մի Համաշխարհային Հիմնադրամ, վերջապես վերացնելու համար սովը և զարգացնելու համար ամենաաղքատ երկրները, որպեսզի նրանց բնակիչները չդիմեն բռնի կամ խաբուսիկ լուծումների և ստիպված չլինեն լքել իրենց Երկրները՝ ավելի արժանապատիվ կյանք փնտրելու համար»[8]:

Եվս մեկ սրտանց հրավեր կցանկանայի հղել Հոբելյանական Տարվա կապակցությամբ. այն ուղղված է առավել հարուստ Պետություններին, որպեսզի ճանաչեն ընդունված բազմաթիվ որոշումների ծանրությունը և որոշեն *ներել պարտքերը* այն Երկրների, որոնք երբեք չեն կարողանալու մարել դրանք: Մեծահոգության հարց լինելուց ավելի, դա արդարության խնդիր է, որն այսօր սրված է անօրինականության մի նոր ձևով, որի մասին մենք գիտակցություն ենք ձեռքբերել. *«Կա, փաստացի, մի իրական "էկոլոգիական պարտք", հատկապես Հյուսիսի և*

[7] Ֆրանցիսկոս Պապ, Կոնդակ *«Գովաբանված եղիր»* (24 Մայիս 2015), 49.
[8] Ֆրանցիսկոս Պապ, Կոնդակ *«Բոլորս եղբայրներ ենք»* (3 Հոկտեմբեր 2020), 262.

Հարավի միջև, որը շաղկապված է առևտրային անհավասարակշռություններին՝ էկոլոգիական ոլորտում գրանցվող հետևանքներով, ինչպես նաև՝ որոշ Երկրների կողմից պատմականորեն կատարված բնական ռեսուրսների անհամաչափ օգտագործմանը»[9]: Ինչպես ուսուցանում է Աստվածաշունչ Սուրբ Գիրքը, երկիրը պատկանում է Աստծուն, և մենք բոլորս այստեղ ապրում ենք որպես *«օտարականներ և պանդուխտներ»* (Ղևտ 25, 23): Եթե իսկապես ուզում ենք ճանապարհ պատրաստել աշխարհում խաղաղության համար, հանձն առնենք վերացնել անարդարությունների սկզբնապատճառները, ջնջենք անարդար ու անլուծելի պարտքերը, կերակրենք քաղցածներին:

17. Հաջորդ Հոբելյանական Տարվա ընթացքում մի շատ նշանակալից տարեդարձ է լինելու բոլոր քրիստոնյաների համար: Արդարև, լրանալու է *Տիեզերական Առաջին Մեծ Ժողովի՝ Նիկեայի Ժողովի 1700-ամյակը*: Լավ է հիշելը, որ առաքելական ժամանակներից ի վեր Հովիվները տարբեր առիթներով հավաքվել են ժողովներում՝ վարդապետական և կարգապահական հարցեր քննելու նպատակով: Հավատքի առաջին դարերի ընթացքում Ժողովները բազմապատկվեցին ինչպես քրիստոնեական Արևելքում, այնպես էլ քրիստոնեական Արևմուտքում, ցույց տալով, թե որքա՜ն կարևոր է Աստծո Ժողովրդի միությունը և Ավետարանի հավատարիմ հռչակումը պահպանելը: Հոբելյանական Տարին կարող է կարևոր առիթ հանդիսանալ՝ այս ժողովական ձևին գործնականություն հաղորդելու համար, որն այսօր քրիստոնեական հասարակությունն ընկալում է որպես միշտ ավելի անհրաժեշտ արտահայտություն՝ ավետարանման հրատապությանը ավելի լավ արձագանքելու համար. բոլոր մկրտվածները, յուրաքանչյուրն իր պարգևաշնորհի ու ծառայության համաձայն, համապատասխանատու են, որպեսզի հույսի բազմաթիվ նշաններ վկայեն աշխարհում Աստծո ներկայության մասին:

Նիկեայի Ժողովը որպես առաջադրանք ուներ պահպանել միությունը, որը լրջորեն վտանգված էր Հիսուս Քրիստոսի աստվածության և Հոր հետ Նրա հավասարության ժխտման պատճառով: Ներկա էին մոտ երեք հարյուր Եպիսկոպոսներ, որոնք Կոստանդիանոս Կայսեր հրավերով հավաքվեցին կայսերական պալատում, 325 թվականի Մայիսի 20-ին: Բազմաթիվ բանավեճերից հետո բոլորը, Հոգու շնորհով, ընդունեցին Հավատքի այն Հանգանակը, որը մինչև օրս դավանում ենք կիրակնօրյա Սուրբ Պատարագի ծիսակատարության ժամանակ: Ժողովական Հայրերը կամեցան այդ Հանգանակը սկսել՝ առաջին անգամ գործածելով *«Մենք հավատում ենք»* արտահայտությունը[10] որպես վկայություն այն բանի, որ այդ «Մենք»ի մեջ բոլոր Եկեղեցիները իրենց վերագտնում էին հաղորդության մեջ, և բոլոր քրիստոնյաները դավանում էին միևնույն հավատքը:

Նիկեայի Ժողովը կարևորագույն իրադարձություն է Եկեղեցու պատմության մեջ: Իր անցկացման տարեդարձը քրիստոնյաներին հրավիրում է միավորվելու Ամենասուրբ Երրորդության և, մասնավորապես, Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու գովքի ու գոհաբանության մեջ, Ով «համագոյակից է Հորը»[11], Ով մեզ հայտնեց Սիրո այդ Խորհուրդը: Բայց Նիկեան նաև հրավեր է բոլոր Եկեղեցիներին և եկեղեցային Համայնքներին՝ առաջ շարժվելու դեպի տեսանելի միություն տանող ճանապարհի վրա, չհոգնելու պատշաճ ուղիներ փնտրելուց՝ լիարժեք կերպով համապատասխանելու համար Հիսուսի աղոթքին. *«Որպեսզի բոլորը մեկ լինեն. ինչպես դու, Հա՛յր, իմ մեջ ես, և ես՝ քո մեջ, թող որ նրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի աշխարհը հավատա, որ Դու ուղարկեցիր ինձ»* (Հվի 17, 21):

---

[9] Ֆրանցիսկոս Պապ, Կոնդակ *«Գովաբանված եղիր»* (24 Մայիս 2015), 51.
[10] *Նիկեական Հանգանակ*: DS 125.
[11] *Նույն*.

Նիկեայի Ժողովում քննարկվել է նաև Զատիկի տոնակատարության օրվա հարցը: Այդ առումով այսօր էլ կան տարբեր դիրքորոշումներ, որոնք խոչընդոտում են Հավատքի հիմնադիր իրադարձությունը տոնակատարել նույն օրը: Մի նախախնամական հանգամանքի բերումով՝ դա տեղի կունենա հենց 2025 թվականին: Թող որ սա կոչ լինի Արևելքի և Արևմուտքի բոլոր քրիստոնյաներին՝ վճռական մի քայլ կատարելու դեպի Զատիկի տոնակատարության ընդհանուր օրվա շուրջ միությունը: Շատերը, հարկ է հիշել, այլևս տեղյակ էլ չեն անցյալի վեճերին և չեն հասկանում, թե ինչպե՛ս կարող են տակավին գոյության մեջ պահվել այս թեմայի շուրջ տարաձայնությունները:

Հույսի մեջ խարսխված

18. Հույսը, հավատքի և սիրո հետ միասին, կազմում է «աստվածաբանական առաքինությունների» եռապատկերը, որոնք արտահայտում են քրիստոնեական կյանքի էությունը (հմմտ. 1Կր 13, 13; 1Թղ 1, 3): Նրանց անքակտելի դինամիկայի մեջ հույսն այն է, ինչը որ, այսպես ասած, կողմնորոշում է տալիս, ցույց է տալիս հավատացյալի գոյության ուղղությունն ու նպատակը: Ուստի, Պողոս Առաքյալը հրավիրում է մեզ լինել *«հույսով ուրախ, նեղության մեջ համբերատար, աղոթքի մեջ հարատև»* (Հռմ 12, 12): Այո, մենք կարիքն ունենք *«հույսով առատանալու»* (հմմտ. Հռմ 15, 13), արժանահավատ և գրավիչ կերպով վկայություն տալու համար այն հավատքի և սիրո մասին, որոնք կրում ենք մեր սրտերում. որպեսզի հավատքը լինի ուրախ, սերը՝ խանդավառ. որպեսզի յուրաքանչյուր ոք ի վիճակի լինի պարգևելու գոնե մեկ ժպիտ, ընկերության մեկ ժեստ, եղբայրական մի հայացք, մի անկեղծ ունկնդրում, մի անվճար ծառայություն՝ իմանալով, որ, Հիսուսի Հոգով, դա կարող է դառնալ հույսով բեղուն սերմ նրանց համար, ովքեր ստանում են այն: Բայց ո՞րն է մեր հույսի հիմքը: Դա հասկանալու համար՝ լավ է կանգ առնել մեր հույսի պատճառների վրա (հմմտ. 1Պտ 3, 15):

19. «Հավատում եմ *հավիտենական կյանքին*»[12]. ահա՛ թե ի՛նչ է դավանում մեր հավատքը, և քրիստոնեական հույսը այս խոսքերի մեջ գտնում է մի հիմնական առանցք: Հույսն, իսկապես, *«աստվածաբանական այն առաքինությունն է, որի մղմամբ ցանկանում ենք [...] հավիտենական կյանքը որպես մեր երջանկությունը»*[13]: Վատիկանյան Երկրորդ Համամիութենական Ժողովը հաստատում է. *«Եթե բացակայում է կրոնական հիմքը և հավիտենական կյանքի հույսը, մարդկային արժանապատվությունը շատ ծանր վերքեր է ստանում չափազանց ծանր կերպով, ինչպես հաճախ հավաստվում է այսօր, և կյանքի ու մահվան, հանցանքի ու ցավի առեղծվածները մնում են չլուծված, այն աստիճան, որ մարդիկ հաճախ սուզվում են հուսահատության մեջ»*[14]: Մենք, մինչդեռ, հույսի առաքինության շնորհիվ, որի մեջ ենք մենք փրկվել, դիտելով ժամանակի հոսքը, ունենք համոզվածությունը, որ մարդկության պատմությունը և մեզնից յուրաքանչյուրի պատմությունը չեն վազում դեպի մի կույր կետ կամ մի մութ վիհ, այլ՝ կողմնորոշված են դեպի Փառքի Տիրոջ հետ հանդիպումը: Ապրենք, հետևաբար, Նրա վերադարձի սպասմամբ և Նրա հետ հավիտյան ապրելու հույսով. այս ոգով է, որ մենք մերն ենք դարձնում առաջին քրիստոնյաների հուզումնալի կանչը, որով ավարտվում է Աստվածաշունչ Սուրբ Գիրքը. «Ե՛կ, Տե՛ր Հիսուս» (Հյտ 22, 20):

20. Մեռած և հարություն առած Հիսուսը մեր հավատքի սիրտն է: Սուրբ Պողոսը, սակավաթիվ խոսքեր արտասանելով, ընդամենը չորս բայ գործածելով՝ մեզ ավանդում է մեր հույսի «կորիզը». *«Ձեզ [...] նախևառաջ ավանդեցի այն, ինչը որ ես ինքս էլ ստացել եմ, այսինքն՝ որ Քրիստոսը մեռավ մեր մեղքերի համար՝ համաձայն Գրվածքների, և որ թաղվեց, և*

[12] *Առաքյալների Հանգանակ*: DS 30.
[13] *Կաթողիկե Եկեղեցու Քրիստոնեական*, 1817.
[14] Վատիկան. Երկրորդ Համ. Ժողով, Հով. Սահմ. *«Բերկրանք և հույս»* (7 Դեկտ. 1965), 21.

որ հարություն առավ երրորդ օրը՝ Գրվածքերի համաձայն, և որ հայտնվեց Կեֆասին և ապա Տասներկուսին» (1Կր 15, 3-5): Քրիստոսը *մեռավ, թաղվեց, հարություն առավ, հայտնվեց*: Մեր համար Նա անցավ մահվան ողբերգության միջով: Հոր սերը Նրան հարություն տվեց Հոգու զորությամբ՝ Նրա մարդկային բնությունը դարձնելով հավիտենության երախայրին մեր փրկության համար: Քրիստոնեական հույսը հենց սրա մեջ է կայանում. մահվան առջև, որտեղ թվում է, թե ամեն ինչ ավարտվում է, մենք վստահությունն ենք ստանում, որ, Քրիստոսի շնորհիվ, Նրա շնորհի միջոցով, որը մեզ հաղորդվել է Մկրտությամբ, *«կյանքը չի խլվում, այլ՝ փոխակերպվում է»*[15], ընդմիշտ: Մկրտության մեջ, հիրավի, Քրիստոսի հետ թաղվելով՝ հանձինս հարություն առած Քրիստոսի մենք ստանում ենք մի Նոր Կյանքի պարգևը, որը քանդում է մահվան պատը՝ այն դարձնելով անցում դեպի հավիտենություն:

Եվ եթե *մահվան* առջև – այդ ցավալի բաժանման, որը ստիպում է մեզ թողնել մեր ամենաթանկ անձանց – որևէ հռետորաբանություն թույլատրելի չէ, Հոբելյանական Տարին կընծայի մեզ հնարավորությունը՝ վերստին բացահայտելու, անսահման երախտագիտությամբ, Մկրտության մեջ ստացված այդ Նոր Կյանքի պարգևը, որն ընդունակ է կերպարանափոխելու ուղբերգությունը: Հոբելյանական համատեքստում կարևոր է վերահիմաստավորել, թե ինչպե՛ս է այս խորհուրդը հասկացվել հավատքի առաջին իսկ դարերից սկսած: Երկար ժամանակ, օրինակ, քրիստոնյաները Մկրտության ավազանը կառուցում էին ութանկյուն ձևով, և դեռ այսօր էլ կարող ենք հիանալ բազմաթիվ հին մկրտարաններով, որոնք պահպանում են այդ ձևը, օրինակ՝ Հռոմում, «Լաթերանյան Սուրբ Հովհաննես» տաճարում: Այն ցույց է տալիս, որ Մկրտության ավազանի մեջ սկիզբ է տրվում ութերորդ օրվան, այսինքն՝ հարության օրվան. այն օրվան, որն անցնում է շաբաթական հերթափոխով կանոնակարգվող սովորական ռիթմից անդին, այդպիսով ժամանակի պարբերաշրջանը բացելով դեպի հավիտենության տարածաչափությունը. կյանքին, որ տևում է ընդմիշտ: Սա է նպատակակետը, որին մենք ձգտում ենք մեր երկրային ուխտագնացության ընթացքում (հմմտ. Հռմ 6, 22):

Այդ հույսի ամենահամոզիչ վկայությունը մեզ տալիս են *մարտիրոսները*, ովքեր, հարություն առած Քրիստոսի հանդեպ իրենց հավատքի մեջ հաստատուն, ընդունակ եղան հրաժարվելու անգամ իրենց կյանքից այստեղ՝ ներքևում, միայն թե չդավաճանեին իրենց Տիրոջը: Նրանք ներկա են բոլոր դարերում և բազմաթիվ են, մեր օրերում գուցե ավելի, քան երբևէ, որպես խոստովանողներ անվախճան կյանքի: Կարիքն ունենք պահպանելու նրանց վկայությունը՝ արգասավոր դարձնելու համար մեր հույսը:

Այս մարտիրոսները, որ պատկանում են քրիստոնեական տարբեր ավանդություններին, նաև միության սերմեր են, քանի որ արտահայտում են արյան համամիութենությունը: Հոբելյանական Տարվա ընթացքում, հետևաբար, իմ ջերմագին ցանկությունն է, որ կատարվի համամիութենական մի ծիսակատարություն, այնպես՝ որ ակնհայտ դարձվի այս մարտիրոսների վկայության հարստությունը:

21. Ի՞նչ է պատահելու մեզ, ուրեմն, մահից հետո: Հիսուսի հետ՝ այդ սեմից այն կողմ գտնվում է հավիտենական կյանքը, որը կայանում է Աստծո հետ լիակատար հաղորդության, Նրա անսահման սիրո հայեցողության ու մասնակցության մեջ: Ինչը որ մենք հիմա ապրում ենք հույսի մեջ, այն ժամանակ տեսնելու ենք իրականության մեջ: Սուրբ Օգոստինոսն այս մասին գրել է. *«Երբ ողջ էությամբս կմիանամ Քեզ, այլևս գոյություն չի ունենա իմ համար ցավ ու վիշտ ամենուր: Ճշմարիտ կյանք կլինի իմ կյանքը, ամբողջովին Քեզնով լի»*[16]: Ինչո՞վ է բնութագրվելու, ուրեմն, հաղորդության այդ լիությունը: Երջանիկ լինելը: *Երջանկությունը* մարդկային էակի կոչումն է, մի նպատակակետ, որ վերաբերում է բոլորին:

---

[15] Հռոմեական Պատարագամատույց, *Հուղարկավորության Առաջին Նախաբան*.
[16] Սբ. Օգոստինոս Հիպպոնացի, *Խոստովանություններ*, 10, 28.

Բայց ի՞նչ է երջանկությունը: Ի՞նչ երջանկություն ենք ակնկալում և ցանկանում: Ո՛չ անցողիկ ուրախություն, մի վաղանցուկ բավարարվածություն, որը, երբ ձեռք է բերվում, միշտ ավելին ու ավելին է պահանջում, ագահության մի շրջապտույտի մեջ, որի ներսում մարդկային հոգին երբեք չի կշտանում, այլ՝ միշտ ավելի ու ավելի է դատարկվում: Մենք կարիքն ունենք մի երջանկության, որը վերջնականապես կամբողջանա այն բանի մեջ, ինչը որ մեզ իրագործում է, այսինքն՝ սիրո մեջ, այնպես, որ կարողանանք ասել, հիմա՛ արդեն. *«Սիրված եմ, ուստի գոյություն ունեմ. և հավերժ գոյություն եմ ունենալու Սիրո մեջ, որը չի հիասթափեցնում, և որից ոչինչ և ոչ ոք երբեք չի կարողանա բաժանել ինձ»*: Կրկին հիշենք Առաքյալի խոսքերը. *«Ես համոզված եմ, [...] որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ ներկա բաները, ո՛չ գալիք բաները, ո՛չ զորությունները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, ո՛չ էլ որևէ մի ուրիշ արարած, երբեք չի կարող բաժանել մեզ Աստծո սիրուց, որը մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է»* (Հռմ 8, 38-39):

22. Հավիտենական կյանքի հետ կապված մեկ ա՛յլ իրողություն *Աստծո դատաստանն* է, թե՛ մեր կյանքի ավարտին, թե՛ ժամանակների վերջում: Արվեստը հաճախ փորձել է ներկայացնել այն, – հիշեք Միքելանջելոյի գլուխգործոցը Սիքստինյան մատռան մեջ, – հետևելով ժամանակի աստվածաբանական ընկալումներին և դիտողին փոխանցելով երկյուղի մի զգացում: Թեև արդարացի է գիտակցության մեծ զգացումով և լրջությամբ պատրաստվելը այդ պահին, որն ամփոփելու է մեր ողջ գոյությունը, բայց միաժամանակ անհրաժեշտ է միշտ անել դա հույսի հարթության վրա, այս աստվածաբանական առաքինության, որը նեցուկ է կյանքին և թույլ է տալիս չընկնել սարսափի մեջ: Աստծո դատաստանը, որը սեր է (հմմտ. 1Հվի 4, 8.16), կարող է հիմնված լինել միմիայն սիրո վրա, հատկապես այն բանի վրա, թե ի՛նչ արած կամ չարած կլինենք ամենակարիքավորների հանդեպ, որոնց մեջ Ինքը՝ Քրիստոսը՝ Դատավորը, ներկա է (հմմտ. Մտթ 25, 31-46): Հետևաբար, խոսքը վերաբերվում է մի դատաստանի, որը տարբերվում է մարդկանց և երկրային դատարանների դատաստանից. այն հարկավոր է հասկանալ որպես ճշմարտության հարաբերություն Սեր-Աստծո և սեփական անձի հետ՝ աստվածային ողորմության անքննելի խորհրդի ներսում: Աստվածաշունչ Սուրբ Գիրքն այս կապակցությամբ հաստատում է. *«Քո ժողովրդին ուսուցանել ես, որ արդարը պետք է սիրի մարդկանց, և Քո զավակներին հաղորդել ես բարի հույսը, որ, մեղքերից հետո, Դու զղջում ես շնորհում, [...] և մենք ողորմություն ենք ակնկալում, երբ դատվում ենք»* (Իմս 12, 19.22): Ինչպես գրել է Բենեդիկտոս Տասնվեցերորդը, *«Դատաստանի պահին մենք փորձառությամբ զգալու և ընդունելու ենք Նրա սիրո այս գերակշռումը աշխարհի և մեր մեջ ներկա ամբողջ չարիքի վրա: Սիրո ցավը դառնում է մեր փրկությունն ու մեր բերկրանքը»*[17]:

Դատաստանը, հետևաբար, վերաբերվում է այն փրկությանը, որի հույսը մենք ունենք, և որը Հիսուսը մեր համար ստացել է Իր մահով և հարությամբ: Այն, ուստի, նպատակաուղղված է բացելու Նրա հետ վերջնական հանդիպմանը: Եվ քանի որ այդ համատեքստում անհնարին է մտածել, որ գործված չարիքը կարող է թաքնված մնալ, այն կարիքն ունի *մաքրագործվելու*, թույլ տալու համար մեզ վերջնական անցում կատարել Աստծո սիրո մեջ: Այս առումով հասկանալի է դառնում աղոթելու անհրաժեշտությունը նրանց համար, ովքեր ավարտել են իրենց երկրային ընթացքը, ինչը որ համերաշխություն է աղոթական բարեխոսության մեջ, որն իր արդյունավետությունը գտնում է Սրբերի Հաղորդության մեջ, այն ընդհանուր կապի մեջ, որը միավորում է մեզ հանձինս Քրիստոսի, Ով արարչության Անդրանիկն է: Այսպիսով, հոբելյանական ներողությունը, աղոթքի ուժով, հատուկ ձևով սահմանված է նրանց համար, ովքեր նախորդել են մեզ, որպեսզի լիակատար ողորմություն ստանան:

[17] Բենեդիկտոս Տասնվեցերորդ Պապ, Կոնդակ *«Հույսով ենք փրկված»* (30 Նոյեմբեր 2007), 47.

23. *Ներողությունը*, հիրավի, թույլ է տալիս բացահայտել, թե որքան անսահմանափակ է Աստծո ողորմությունը: Պատահական չէ, որ հին ժամանակներում «ողորմություն» եզրը փոխգործածելի էր «ներողություն» (*ինդուլգենցիա*) եզրի հետ, ճի՛շտ որովհետև դրանով արտահայտվում է Աստծո ներողության լիությունը, որը սահմաններ չի ճանաչում:

Ապաշխարության Խորհուրդը վստահեցնում է մեզ, որ Աստված ջնջում է մեր մեղքերը: Սաղմոսի խոսքերը վերադառնում են իրենց մխիթարական լիցքով. *«Նա ներում է քո բոլոր հանցանքները, բուժում է քո բոլոր հիվանդությունները, փրկում է քո կյանքը գերեզմանից, շրջապատում է քեզ բարությամբ և ողորմությամբ: [...] Տերը ողորմած է և գթած, դանդաղ՝ բարկության մեջ, և առատ՝ սիրով: [...] Նա մեր հետ չի վարվում մեր մեղքերի համաձայն և չի հատուցում մեզ ըստ մեր անօրինությունների: Որովհետև, որքան բարձր է երկինքը երկրից, այնքան հզոր է Նրա ողորմությունը նրանց հանդեպ, ովքեր երկնչում են Իրենից. որքան հեռու է արևելքը արևմուտքից, այնքան Նա հեռացնում է մեր հանցանքները մեզնից»* (Սղմ 103, 3-4.8.10-12): Խորհրդական Հաշտությունը միայն գեղեցիկ հոգևոր արարողություն չէ, այլ՝ վճռական, էական և անհրաժարելի քայլ է յուրաքանչյուրի հավատքի ճանապարհի համար: Այնտեղ մենք թույլ ենք տալիս Տիրոջը ոչնչացնել մեր մեղքերը, բուժել մեր սրտերը, կրկին ոտքի բարձրացնել և գրկել մեզ, ճանաչել տալ մեզ Իր գորովալի ու կարեկից Դեմքը: Իսկապես, Աստծուն ճանաչելու ավելի լավ միջոց չկա, քան թույլ տալը, որ հաշտվենք Իր հետ (հմմտ. 2Կր 5, 20)՝ ճաշակելով Իր ներումը: Չհրաժարվենք, ուրեմն, Խոստովանությունից, այլ՝ վերստին բացահայտենք բժշկության ու բերկրանքի խորհրդի գեղեցկությունը, մեղքերի թողության գեղեցկությունը:

Այդուհանդերձ, ինչպես գիտենք մեր անձնական փորձառությունից, մեղքը «թողնում է իր հետքը», այն իր հետ բերում է հետևանքներ. ո՛չ միայն արտաքին, որպես գործված չարիքի հետևանքներ, այլ նաև՝ ներքին, քանի որ *«ամեն մեղք, նույնիսկ ներելի մեղքը, առաջացնում է անառողջ կապվածություն արարածներին, ինչը որ մաքրագործման կարիք ունի, ինչպես այստեղ՝ երկրի վրա, այնպես էլ մահից հետո՝ քավարան կոչվող վիճակում»*[18]: Հետևաբար, տկար և չարի կողմից հրապուրված մեր մարդկային բնության մեջ շարունակում են մնալ «մեղքի մնացորդներ»: Դրանք հեռացվում են ներողությամբ, միշտ՝ Քրիստոսի շնորհով, Ով, ինչպես գրել է Սբ. Պողոս Վեցերորդը, *«մեր "ներողությունն"»* է[19]: Ապաշխարության Առաքելական Գրասենյակը հրապարակելու է դրույթները, որոնց հետևելով հնարավոր կլինի ձեռքբերել և արդյունավետ դարձնել Հոբելյանական Ներողության գործադրումը:

Ներմամբ լի այդ փորձառությունը կարող է միայն բացել սիրտն ու միտքը՝ *ներելու* մեր հերթին: Ներելը չի փոխում անցյալը, չի կարող փոփոխել այն, ինչն արդեն եղել է. և, այնուամենայնիվ, ներումը կարող է հնարավորություն ընձեռել փոխելու ապագան և ապրելու ա՛յլ կերպ՝ առանց ոխի, քենի և վրեժխնդրության: Ներողամտությամբ լուսավորված ապագան թույլ է տալիս մեզ կարդալ անցյալը տարբեր, առավել հանգիստ աչքերով, նույնիսկ եթե դրանք դեռ թաց են արցունքներով:

Անցյալ Արտակարգ Հոբելյանի ժամանակ ես կարգեցի *Ողորմության Միսսիոներներին*, որոնք շարունակում են կարևոր առաքելություն իրականացնել: Թող որ կարողանան նրանք գործադրել իրենց ծառայությունը նաև հաջորդ Հոբելյանական Տարվա ընթացքում, վերադարձնելով հույս և ներելով ամեն անգամ, երբ մի մեղավոր իրենց կդիմի բաց սրտով և զղջացած հոգով: Թող որ նրանք շարունակեն հաշտության գործիքներ լինել և օգնել մեզ նայելու ապագային սրտի հույսով, որ բխում է Հոր ողորմությունից: Մաղթում եմ, որ Եպիսկոպոսները կարողանան օգտվել նրանց թանկարժեք ծառայությունից, հատկապես՝

[18] *Կաթողիկե Եկեղեցու Քրիստոնեական*, 1472.
[19] Պողոս Վեցերորդ Պապ, Կոնդակ *«Առաքելական հուշակոթողներ»* (23 Մայիս 1974), 2.

ուղարկելով նրանց այնտեղ, որտեղ հույսը ծանր փորձության է ենթարկվում, օրինակ՝ բանտերում, հիվանդանոցներում և այն վայրերում, որտեղ ոտնահարվում է անձի արժանապատվությունը, ամենադժվարին իրավիճակներում և ամենաբարոյալքված միջավայրերում, որպեսզի ոչ ոք զրկված չմնա Աստծո ներումն ու մխիթարությունը ստանալու հնարավորությունից:

24. Հույսը հանձինս *Աստվածամոր* գտնում է իր բարձրագույն վկայությունը: Նրա մեջ տեսնում ենք, թե ինչպե՛ս հույսը ո՛չ թե անհիմն լավատեսություն է, այլ՝ շնորհի պարգև է կյանքի իրապաշտության մեջ: Որևէ մոր նման, ամեն անգամ, երբ նա նայում էր իր Որդուն, մտածում էր Նրա ապագայի մասին, և, վստահաբար, նրա սրտի մեջ արձանագրված էին մնում այն խոսքերը, որոնք Սիմեոնն ուղղել էր նրան Տաճարում. *«Նա այստեղ է Իսրայելում շատերի անկման և կրկին ոտքի կանգնելու համար, և որպես նշան հակառակության. – և քեզ էլ՝ մի սուր խոցելու է քո հոգին»* (Ղկս 2, 34-35): Եվ խաչի ստորոտում, մինչ տեսնում էր, թե ինչպե՛ս էր անմեղ Հիսուսը տանջվում ու մահանում, տանջալից ցավին ենթարկվելով հանդերձ, նա կրկնում էր իր «այո»ն՝ չկորցնելով Տիրոջ հանդեպ հույսն ու վստահությունը: Այդ կերպ նա մեր համար համագործակցում էր կատարմանը այն բաների, որոնք իր Որդին ասել էր՝ ավետելով, որ պետք է *«շատ չարչարվեր և մերժվեր երեցների, քահանայապետների և օրենսգետների կողմից, սպանվեր և երեք օր հետո հարություն առներ»* (Մրկ 8, 31), և այդ ցավի երկունքի մեջ, ընծայված՝ հանուն սիրո, դառնում էր մեր Մայրը, հույսի Մայրը: Պատահական չէ, որ ժողովրդական բարեպաշտությունը Սուրբ Կույսին շարունակում է « *Stella maris* » - « *Ծովի Աստղ* » անվանել, մի տիտղոս, որն արտահայտում է ապահով հույսը, որ կյանքի փոթորկալի իրադարձությունների մեջ Աստվածամայրը հասնում է մեզ օգնության, աջակցում է մեզ և հրավիրում է վստահություն ունենալու և շարունակելու հուսալ:

Այս կապակցությամբ ցանկանում եմ հիշեցնել, որ Մեքսիկայում գտնվող Գուադալուպեի Տիրամոր Սրբավայրը պատրաստվում է 2031 թվականին նշելու Աստվածածնի առաջին հայտնության 500-ամյակը: Երիտասարդ Խուան Դիեգոյի միջոցով Աստվածամայրը հեղափոխական հույսի ուղերձ հղեց, որը նա այսօր էլ կրկնում է բոլոր ուխտավորներին ու հավատացյալներին. *«Մի՞թե ես այստեղ չեմ. ես, որ քո մայրն եմ»*[20]: Սրտերի մեջ նման պատգամ է տպավորվում աշխարհով մեկ ցրված բազմաթիվ Մարեմական Սրբավայրերում, որոնք նպատակակետերն են բազմաթիվ ուխտավորների, ովքեր Աստվածամորն են վստահում իրենց հոգսերը, ցավերն ու ակնկալիքները: Այս Հոբելյանական Տարվա ընթացքում Սրբավայրերը թող որ լինեն ընդունելության սուրբ վայրեր և արտոնյալ տարածքներ՝ հույս ծնելու համար: Ուխտավորներին, ովքեր կգան Հռոմ, կոչ եմ անում կանգ առնել աղոթելու քաղաքի Մարեմական Սրբավայրերում, պատվելու համար Մարիամ Աստվածածնին և հայցելու համար նրա պաշտպանությունը: Վստահասիրտ եմ, որ բոլորը, հատկապես նրանք, ովքեր տառապում են և խռովված են, կկարողանան փորձառությամբ զգալ մայրերի մեջ ամենագորովալի Մոր մոտիկությունը, ով երբեք չի լքում իր զավակներին, նա, որ Աստծո Սուրբ Ժողովրդի համար «նշան է ապահով հույսի և մխիթարություն»[21]:

25. Դեպի Հոբելյանական Տարին տանող քայլքի ընթացքում վերադառնա՞նք Աստվածաշունչ Սուրբ Գրքին և այս խոսքերը լսենք որպես մեզ ուղղված խոսքեր. *«Մենք, որ ապաստան փնտրեցինք Նրա մեջ, զորեղ քաջալերանք ունենք՝ ամուր կառչելու հույսին, որ դրված է մեր առջև: Դրա մեջ, արդարև, մեր կյանքի համար ասես* մի խարիսխ ունենք՝ ապահով և ամուր, *որ մտնում է մինչև սրբարանի վարագույրից այն կողմ, ուր Հիսուսը մտավ որպես նախակարապետ մեր համար»* (Եբր 6, 18-20): Սա զորեղ հրավեր է՝ երբեք չկորցնելու մեզ պարգևված հույսը, պինդ պահելու այն՝ ապաստան գտնելով Աստծո մեջ:

[20] *Նիքան Մոպոհուա*, 119.
[21] Վատիկանյան Երկրորդ Համ. Ժողով, Վարդ. Սահմ. *«Լույս ազգաց»* (21 Նոյեմբեր 1964), 68.

Խարիսխի պատկերը մի հուշում է՝ հասկանալու համար կայունությունն ու ապահովությունը, որ մենք ունենք կյանքի անհանգիստ ջրերի մեջ, եթե մեզ վստահում ենք Տեր Հիսուսին: Փոթորիկները երբեք չեն կարողանալու հաղթել, քանի որ մենք խարսխված ենք շնորհի հույսին, որն ի զորու է մեզ կյանք պարգևել Քրիստոսի մեջ, հաղթահարելով մեղքը, վախը և մահը: Այս հույսը, որը շատ ավելի մեծ է, քան ամեն օրվա բավարարվածությունները և կյանքի պայմանների բարելավումները, մեզ տեղափոխում է նեղություններից այն կողմ և հորդորում է մեզ քայլել՝ առանց մեր տեսադաշտից կորցնելու նպատակակետի մեծությունը, որին կոչված ենք. Երկինքը:

Եկող Հոբելյանական Տարին, հետևաբար, կլինի մի Սուրբ Տարի, որը բնութագրվում է այն հույսով, որ երբեք չի մարում. Աստծո վրա հաստատված հույսը: Թող որ այն օգնի մեզ նաև վերագտնել անհրաժեշտ վստահությունը ինչպես Եկեղեցու, այնպես էլ հասարակության, միջանձնային հարաբերությունների, միջազգային հարաբերությունների, յուրաքանչյուր անձի արժանապատվության խթանման և արարչության նկատմամբ հարգանքի մեջ: Թող որ հավատացյալների վկայությունը ճշմարիտ հույսի թթխմոր լինի աշխարհում, ավետիս նոր երկնքի և նոր երկրի (հմմտ. 2Պտ 3, 13), որտեղ կարող ենք ապրել արդարության և ժողովուրդների միջև ներդաշնակության մեջ, ձգտելով հասնել Տիրոջ խոստման կատարմանը:

Այս պահից ևեթ թողնենք, որ հույսը գրավի մեզ, և թույլ տանք, որ այն մեր միջոցով վարակիչ դառնա նրանց համար, ովքեր այն ցանկանում են: Թող մեր կյանքն ասի նրանց. *«Հուսա՛ Տիրոջը, ուժե՛ղ եղիր, ամրապնդի՛ր սիրտդ և հուսա՛ Տիրոջը»* (Սղմ 27, 14): Թող որ հույսի ուժը լեցնի մեր ներկան, մինչ վստահասիրտ սպասում ենք Տեր Հիսուս Քրիստոսի վերադարձին, որին գո՜վք և փա՜ռք, այժմ և հավիտյանս հավիտենից:

Տրված՝ Հռոմում, «Լաթերանյան Սուրբ Հովհաննես» տաճարի մոտ, Մայիսի 9-ին, Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման Տոնի օրը, 2024 թվականին, Քահանայապետությանս տասներկուերորդ տարում:

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ

Թարգմանեց՝ Տ. Մաշկոց քհն. Ղազարյան